

գրած (վեցերորդ) նամակին մէջ (Գիւ. Միւ. վենետ.), որուն մէջ յիշատակութիւն կ'ըլլայ քանի մը հոգւոյ կողմանէ իրեն դէմ եղած թշնամութիւններու մասին, որուն ինչ ըլլալը շատ յայտնի չէ:

Անտոնեան Միաբան Հ. Պօղոս եւ Հ. Գրիգոր վարդապետներուն 20 Յուլիս 1746 թուականաւ Վ. Պոլսէն իրենց Մեծաւորին ի Վիքնան գրած նամակէն այնչափ միայն կը հասկըցուի, որ Սարգսի այստեղ յիշած «երկու ակտակիր ընկերակիցքն» են՝ երկու կաթողիկեայ Եպիսկոպոսներ, Աթանաս Եպ. Մէրասեան եւ Յակոբոս Մեսրոբ Արքեպ. Քեահեա Արապեան, որոնք նոյն միջոցին Հռոմ կը գտնուէին իրենց ձեռնադրութեան անվաւեր ըլլալու խնդրոյն լուծումը Ս. Ժողովքէն ընդունելու համար: Այս երկու անձանց վրայ ուրիշ առթիւ ընդարձակ կը գրեմ: Ահա նամակագիրներուն խօսքը. «Սարգիս Եպիսկոպոսին կողմանէ այժմ Հռոմայու մէջն հրատարակեն երկու անձինքն որք նախ ձեռնադրեցան նախ քահանայք յետոյ Եպիսկոպոսք երիցս անգամ յետ ձեռնադրութեան մնացին զուրկ յեպիսկոպոսութենէ եւ նուաստագոյն ի մէջ քահանայից մնալով, այսպէս եւ այժմ սկսան զայլս վիրաւորել այսպիսի կատակական բանիւք. այժմ շուարեալ է Սարգիս Եպիսկոպոսն. այսպէս ասեաւ Վեհալուստերին (այն է՝ Աբրահամ Կաթողիկոսին) մերում թէ այս է յետ ամի միոյ հասանելոյն ըստամազօլ ճամբեր է բերեր է իւրեան կոնդակ մի յետ բերելոյն ոչ հաւանելով նոյն կոն-